ՀՀ ԳԱԱ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Մամուլում բանավեճ է բացվել հայ գիտության ճակատագրի շուրջ (25 հունվարի 2005 թ.): Սակայն մամուլի վերջին հրապարակումները վկայում են այն մասին, որ բանավեճ, որպես այդպիսին՝ չկա, այլ կան միայն դժգոհների կամ նեղացածների ելույթներ, որոնք բացառապես բացասական են տրամադրված Գիտությունների ազգային ակադեմիայի նկատմամբ: Այսպես, երկու շաբաթվա ընթացքում մամուլում հայտնվեցին «Գիտությունների ակադեմիա. միայնակների խռովություն» հոդվածը, որում ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանի տնօրեն, ակադեմիկոս Հանրի Ներսիսյանը ներկայացրեց մի շարք ծանր մեղադրանքներ ՀՀ ԳԱԱ նախագահության հասցեին, և ակադեմիկոս Գրիգոր Գուրզադյանի «Մտորումներ գիտությունների ակադեմիայի ավերակների վրա» հոդվածը, որում նա կոչ է անում լուծարել ողջ Գիտությունների ակադեմիան:

Զարմանք է առաջացնում հրապարակումների, հատկապես վերջին հոդվածի, երանգն ու բովանդակությունը, որտեղ ակադեմիկոսի կոչում ունեցող անձն իրեն թույլ տվեց հրապարակայնորեն վիրավորել իր գործընկերներին, միջազգային ճանաչում ունեցող արժանավոր գիտնականներին: Ի դեպ, լինել գիտնական, ամենևին չի նշանակում լինել գիտության լավ կազմակերպիչ, ինչի մասին է վկայում Գ. Գուրզադյանի ղեկավարած Գառնիի տիեզերական աստղագիտության ինստիտուտի հիմնահատակ փլուզումն ու վերացումը: Այժմ արդեն նա խորհուրդ է տալիս արմատավորել գիտական հիմնարկության վերացման իր «յուրօրինակ մեթոդն» Ազգային ակադեմիայի ողջ համակարգում: Եվ դա անում է ԳԱԱ անդամը, ով ինքն իրեն աղատել է ակադեմիայի գործունեությունից՝ վերջին 10–15 տարիների ընթացքում չկատարելով ակադեմիայում պարտավորությունները, թեև շարունակում է օգտվել ակադեմիական արտոնություններից:

Ակադեմիկոս Հ. Ներսիսյանի ելույթը ՀՀ ԳԱԱ ընդհանուր ժողովում և մամուլում, որը հիմնականում վերաբերում է Հիմնարար գրադարանի խնդիրներին (այդ խնդիրները սովորաբար լուծում են ստանում աշխատանքային կարգով), ինչպես նաև ակադեմիկոս Գ. Գուրզադյանի մամուլում հանրահավաքային երանգ ունեցող ելույթը մեղադրանք են ուղղված ՀՀ ԳԱԱ նախագահության և ընդհանրապես ողջ ակադեմիայի հասցեին: Առհասարակ, սովորական լրագրողական էթիկան կպահանջեր այդ նույն հրապարակման մեջ միաժամանակ խոսք տրամադրել նաև մեղադրվող կողմին: Ի դեպ, ՀՀ ԳԱԱ 2005 թ. մարտի 29-ի տարեկան ընդհանուր ժողովի ընթացքում հրապարակվել են տվյալներ, ըստ որոնց, կարելի է կազմել և՛ ՀՀ ԳԱԱ ծախսերի, և՛ գիտնականների նվաճումների, և՛ գիտության հիմնախնդիրների ու հետագա զարգացման ուղիների մասին ամբողջական պատկերը:

Հարց է ծագում՝ ինչո՞ւ և ո՞ւմ է դա ձեռնտու: Ցավոք, երևան է գալիս այն վարկածը, ըստ որի, մասշտաբային արշավանք է ծավալվում Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիան հեղինակազրկելու ուղղությամբ: Հնարավոր է, որ այդ արշավանքի նպատակը ռեֆորմիստական դարձվածաբանության անվան տակ ակադեմիական համակարգի կազմացրման գործընթացն անցկացնելն է՝ ի հաճույս գիտությունից հեռու մարդկանց: Այդ դեպքում հասկանալի է, թե ինչու է արշավանքն ուղղված առաջին հերթին ակադեմիայի ղեկավարության դեմ, որն արդեն երկար տարիներ պաշտպանում է հայ ժողովրդի հպարտության՝ Գիտությունների ազգային ակադեմիայի ամբողջականությունն ու ինքնավարությունը և մեծ ջանքեր գործադրում նրա գիտական ներուժի և ենթակառուցվածքի պահպանման ուղղությամբ:

Ի գիտություն նորահայտ բարեփոխողների՝ նշենք, որ Գիտությունների ազգային ակադեմիան ոչ թե առհասարակ գիտության զարգացումն «արգելակող» ակադեմիկոսների ինչ-որ մի խումբ է, այլ նախ և առաջ գիտնականներին, ակադեմիայի անդամներին, գիտահետազոտական ինստիտուտներն ու կենտրոնները միավորող կայացած համակարգ:

Մենք մեր պարտքն ենք համարում հայտարարել, որ Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի նման հեղինակազրկումն ապակայունացնող է և կարող է հանգեցնել Հայաստանում ազգայի անվտանգության ապահովման, երկրի սոցիալական, տնտեսական և քաղաքական զարգացման համար անհրաժեշտ գիտության բարեփոխման և զարգացման բնականոն ընթացքի խախտմանը:

ՀՀ ԳԱԱ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ
18 ապրիլի 2005 թ.